Հաստատում եմ
տնօրեն Ի. Սարգսյան
29.08.2022թ

# ՈւՍՈւՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ
# ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
# ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ գ. Ակունք

Ակունքի միջն. դպրոցի 10-րդ դասարան

Սուսաննա Վալիայի Մովսեսյան

2022-2023 ուսումնական տարի

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

X դասարանում սովորում են 23 աշակերտ՝ 12 տղա, 11 աղջիկ: Այլ ազգի 1 աշակերտուհի կա դարանում:

Դասարանը ակտիվ և համախմբված է: Աշակերտները համերաշխ են: Նրանք օգնում են միմյանց ցանկացած հարցում: Դասարանը ակտիվորեն մասնակցում է համադպրոցական միջոցառումներին, հանրօգուտ աշխատանքներին և շաբաթօրյակներին:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

2022-2023 ուստարվա ընթացքում դասարանի հետ տարվող աշխատանքների նպատակն է բարձրացնել աշակերտների ռազմահայրենասիրական դաստիրակության աստիճանը, նպաստել նրանց մտավոր կարողությունների, գիտելիքների, հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: Աշխատեն, որ լինեն ավելի համերաշխ ու ընկերասեր: ՈՒստարվա ընթացքում անցկացնել զրույցներ, էքսկուրսիաներ, հանրօգուտ աշխատանքներ: Անհատական աշխատանքների միջոցով նպաստել ուսման մեջ թերացող աշակերտների առաջադիմության բարձրացմանը: Անցկացնել դասալսումներ, ծնողական ժողովներ: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

## 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն**: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա

հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

3.2 **Գեղագիտական դաստիարակություն:**
Աշակերտների մեջ ձևավորել գեղագիտություն և ճաշակ: Սովորեցնել նրանց գնահատել արվեստը: Այցելել պատկերասրահներ, մշակութային կոթողներ:

3.3 **Ռազմահայրենասիրական դաստիարակություն:**
Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ : Նշել մի շարք ֆիդայինների և հերոսների անուններ և թվարկել այն բնավորության գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստի ձևերը:

3.4 **Ֆիզիկական դաստիարակություն:** Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը:

3.5 **Աշխատանքային դաստիարակություն:** Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ կարողանան գոյատևել ներկայիս դժվար պայմաններում:

3.6 **Բնապահպանական դաստիարակություն**: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են իրենց շրջապատում :

4. **Դպրոց-ընտանիք կապը**: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց - ընտանիք կապը, որպեսզի աշակերտները ավելի լավ սովորեն:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| N | Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն | կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| 1 | Աշխատանքային պլանի կազմում, նոր ուսումնական տարվա դասագրքերի բաշխում: | I | աշակերտ դասղեկ |
| 2 | <<Ովքեր են պատերազմներ հրահրողները>>: | II | աշակերտ դասղեկ |
| 3 | << Կյանքդ` կյանքիս համար, կյանքս` կյանքիդ գնով >>: | III | աշակերտ դասղեկ |
| 4 | <<Ինչու են լալիս մայրերը >> | IV | աշակերտ դասղեկ |
| 5 | << Ինչով է տարբերվում Հայը մյուս ազգերից >> թեմայով զրույց: | V | աշակերտ դասղեկ |
| 6 | << Բնական պաշարներ >> թեմայով քննարկում: | VI | աշակերտ դասղեկ |
| 7 | << Հայաստանը պատմության քառուղիներում>>: | VII | աշակերտ դասղեկ |
| 8 | << Պետական խորհրդանիշներ>>: | VIII | աշակերտ դասղեկ |
| 9 | <<Եթե ես երկրի նախագահը լինեի>> թեմայով զրույց- բանավեճ: | IX | աշակերտ դասղեկ |
| 10 | <<Հայաստանի պաշտպանները երեկ, այսօր և վաղը>> թեմայով զրույց- բանավեճ: | X | աշակերտ դասղեկ |
| 11 | << Գնահատիր ինքդ քեզ >>: | XI | աշակերտ դասղեկ |
| 12 | Զրույց՝ <<Մեր դասարանում ազնիվ ու անկեղծ հարաբերություններ>> թեմայով: | XII | աշակերտ դասղեկ |
| 13 | << Իմ իրավունքներն ու պարտականությունները >> : | XIII | աշակերտ դասղեկ |
| 14 | << Տակտի զգացողությունը հասուն լինելու նշան է >>: | XIV | աշակերտ դասղեկ |
| 15 | << Նրանց մասին ովքեր նվիրված են մեզ >> թեմայով բաց քննարկում և վերլուծություն: | XV | աշակերտ դասղեկ |
| 16 | << Մարդկության պատմության ամենագեղեցիկ սիրո պատմությունները >>: | XVI | աշակերտ դասղեկ |
| 17 | << Սերն իմ տանը>> : | XVII | աշակերտ դասղեկ |
| 18 | << Սիրում եմ…. >>: | XVIII | աշակերտ դասղեկ |
| 19 | << Լրատվամիջոցներ և կերպարներ >>: | XIX | աշակերտ դասղեկ |
| 20 | << Բարեկամություն որ չի դիմացել փորձություններին >>: | XX | աշակերտ դասղեկ |
| 21 | << Մեր ընտանիքի լավ բարեկամները >>: | XXI | աշակերտ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | դասղեկ |
| 22 | << Ինչպես կըանքում հաջողության հասնել>>: | XXII | աշակերտ դասղեկ |
| 23 | << Քաղաքացու և մարդու իրավունքներն ու պարտականությունները>>: | X XIII | աշակերտ դասղեկ |
| 24 | Զրույց՝ <<Ով է իսկական քաղաքացին >> թեմայով: | XXIV | աշակերտ դասղեկ |
| 25 | << Ընկերը ճանաչվում է դժբախտության պահին >> : | XXV | աշակերտ դասղեկ |
| 26 | Զրույց ՝ <<Երբ քեզ շրջապատում են սիրելի մարդիկ >> թեմայով: | XXVI | աշակերտ դասղեկ |
| 27 | Մարդ, որին կուզեի նմանվել : | XXVII | աշակերտ դասղեկ |
| 28 | << Ինչպես ապրել կյանքը >>: | XXVIII | աշակերտ դասղեկ |
| 29 | << Պետք է արդյոք, խնայել >>: | XXIX | աշակերտ դասղեկ |
| 30 | << Դժվարություններ, որոնց բախվում եմ >>: | XXX | աշակերտ դասղեկ |
| 31 | << Իմ երազանքներն ու նպատակները >> : | XXXI | աշակերտ դասղեկ |
| 32 | <<Ինչպես հաղթահարել ծուլությունը>>: | XXXII | աշակերտ դասղեկ |
| 33 | <<Աշխատանքը բարեկեցության աղբյուրն է>>: | XXXIII | աշակերտ դասղեկ |
| 34 | Բանավեճ <<Գեղեցիկն ու տգեղը մեր կյանքում>>: | XXXIV | աշակերտ դասղեկ |

## ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

| **Անցկացման օրը** | **Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը** | **ծանոթություն** |
|---|---|---|
| 07.09.2022 | <<Գիտելիքը ամենակարող ուժ է>> | |
| 14.09.2022 | <<Երկիր որտեղ կուզեի ապրել>> | |
| 28.09.2022 | << Մենք ատում ենք պատերազմը >> | |
| 05.10.2022 | << Տոնդ շնորհավոր, ուսուցի՛չ >> | |
| 19.10.2022 | << Իմ օրագրի ուրախ և տխուր էջերը >> | |
| 09.11.2022 | << Մարդիկ, առանց որոնց ես միայնակ եմ>> | |
| 30.11.2022 | <<Ասա ով է ընկերտ և ես կասեմ…>> զրույց | |
| 14.12.2022 | <<Կյանքի աստիճաններով դեպի վեր>> զրույց | |